ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԿՈՆԴԱԿԸ ԱԼԵՔՍԱՆԴՐ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻՆ «Ս. ՍԱՀԱԿ – Ս. ՄԵՍՐՈՊ» ՇՔԱՆՇԱՆՈՎ ՊԱՐԳԵՎԱՏՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ԳԻՐ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՕՐՀՆՈՒԹԵԱՆ ԵՒ ԳՆԱՀԱՏԱՆԱՅ ԱՌ ՍԻՐԵՑԵԱԼ ՈՐԴԻՆ ՄԵՐ ԵՒ ՀԱՐԱՋԱՏ ՋԱՒԱԿՆ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՅ ՍՐԲՈՅ ԷՋՄԻԱԾՆԻ ՄԵԾԱՐԳՈՅ ՏԻԱՐ ԱԼԵՔՍԱՆԴՐ ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆ, ՈՐ ՅԵՐԵՒԱՆ

Համայն հայութեան հոգեւոր կենտրոն Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից Հայրապետական Մեր օրհնութիւնն ենք բերում Ձեզ՝ մեր ժողովրդի եւ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու հարազատ զաւակիդ:

Ցարգարժան պրն Ցարութիւնեան, անդրադառնալով ստեղծագործական Ձեր բեղուն գործունէութեանն ու առատ վաստակին, գոհաբանական աղօթք ենք առ Աստուած բարձրացնում, որ օրհնել եւ օրհնում է ազգս հայոց Ձեզ պէս շնորհաշատ ու արժանաւոր զաւակներով: Ձեր կեանքը ամբողջական նուիրում ու ծառայութիւն է երաժշտական արուեստին: Բազմաժանր Ձեր գործերը իրենց զգացմունքայնութեամբ ու մեղեդայնութեամբ, իւրօրինակ եւ նրբաճաշակ մտածողութեամբ հնչել են աշխարհի նշանաւոր բազմաթիւ բեմերից եւ գնահատուած են հայրենական ու միջազգային պարգեւներով: Մեծ կտաւի գործերի կողքին Դուք հեղինակել էք նաեւ բազմաթիւ երգեր, որոնք այսօր ճանաչուած են ու սիրուած եւ շուրթերին են մեր ժողովրդի: Սնունդ առնելով ազգային երաժշտութեան մաքուր ակունքներից եւ շարունակելով մեր անուանի երգահանների հարուստ աւանդները՝ Ձեր ստեղծագործութիւնները միաժամանակ կրում են կնիքը հայրենանուէր եւ եկեղեցասէր Ձեր հոգու: Ձեր անունը առմիշտ շաղկապուած է նաեւ հոգեւոր երաժշտութեան հետ: «Գթա Տէր»-ի Ձեր անզուգական մշակումը յաճախ է հնչում մեր եկեղեցիներում՝ հոգեհանգստեան արարողութեան ընթացքին մխիթարութեան զգացումով լցնելով հաւատացեալների հոգիները:

Ձեր գործունէութեան ծիրի մէջ Դուք կարեւորել էք նաեւ երաժիշտների նոր սերունդի պատրաստման շնորհակալ առաքելութիւնը՝ տասնամեակներ շարունակ նախանձաւոր սիրով ու նուիրումով ուսուցանելով հարիւրաւոր ուսանողների Երեւանի Կոմիտասի անուան պետական կոնսերուատորիայում, որի շնորհալի սաներից էք եղել նաեւ Դուք:

Ցարգարժան պրն Ցարութիւնեան, մեր ժողովրդի երախտաւորների շարքում առմիշտ եւ արժանապէս արձանագրուած է փաղանդաւոր հայորդուդ անունը, եւ Մենք ուրախ ենք ի

գնահատութիւն հայ մշակոյթին Ձեր մատուցած բազմարդիւն ծառայութեան, Հայրապետական այսու Կոնդակով շնորհելու Ձեզ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու

ՍՈՒՐԲ ՍԱՀԱԿ-ՍՈՒՐԲ ՄԵՍՐՈՊ

պատուոյ բարձր շքանշանը:

Ի խորոց սրտի աղօթքով բարեմաղթում ենք, որ Երկնաւոր Տէրը Իր Հայրական սիրոյ եւ խնամքի մէջ միշտ քաջառողջ ու երջանիկ պահի ու պահպանի Ձեզ եւ Ձեր ընտանեաց անդամներին՝ պարգեւելով երկնատուր ամենայն բարիք եւ գործոց յարանորոգ յաջողութիւններ:

Ողջ լերուք ի Տէր, զօրացեալ շնորհօք Սուրբ Հոգւոյն եւ յաւէտ օրհնեալ ի Մէնջ. ամէն:

Օրհնութեամբ՝

ԳԱՐԵԳԻՆ Բ
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ Կոնդակս ի 21-ն Ապրիլի
Ցամի Տեառն 2004 եւ ի թուին հայոց ՌՆԾԳ
ի Մայրավանս Սրբոյ Էջմիածնի
ընդ համարաւ 223